

## Տ. ԱԴԱՄ ՔԱՀԱՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ
(ավազանի անունը՝ Գևորգ)

Ծնվել է 1976 թ. քաղաքամայր Երևանում:

1982-1992 թթ. սովորել է № 194 միջնակարգ դպրոցում:

1992-1994 թթ. սովորել է Երևանի գործավար-ռեֆերենտների ուսումնարանում:

1995 թվականին ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան և 2000 թ. դեկտեմբերի 25-ին՝ Ս. Ստեփաննոս Նախավկայի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանի, Մայր Տաճարում ձեռնադրվել է սարկավագ:

2001 թվականին, ավարտելով Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, ծառայության է նշանակվել Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգում՝ որպես մամլո գործավար:

2002 թվականի ապրիլի 11-ին պաշտպանել է «Գրաբարի անցյալ դերբայի իմաստային առումներն ըստ Ղևոնդի «Պատմության»» թեմայով ավարտաճառը՝ արժանանալով «քաջալավ» գնահատականի:

Նույն թվականի սեպտեմբերի 1-ին, Ս. Աստվածածնի գոտու գյուտի տոնի օրը, ձեռամբ Գերաշնորհ Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա: